# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 11 | Ապրիլ | 2019 թ. | Ա | 0154126500 |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | | | |
| 11 | Ապրիլ | 2019 թ. | | |

Ճշգրտվող հաշվի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

| | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 0 3 4 4 8 |
| [9] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 3 4 4 8 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 29106318 դատահոգեբանական փորձաքննություն | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

11/04/2019 12:36:24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

26.02.2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Դ.Ոսկանյանս, վերանայելով թիվ 29106318 քրական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Անհայտ անձի կողմից դեռևս չպարզված հանգամանքներում Արագածոտնի մարզի Օշական գյուղի բնակիչ, 08.05.2006թ.-ին ծնված Մեսրոպ Պետրոսի Խումարյանին ինքնասպանության հասցնելու հետևանքով, 2018թ. սեպտեմբերի 26-ին ժամը $22^{30}$-ի սահմաններում, նույն գյուղի Այգեստան փողոցի 6-րդ նրբանցքի 1-ին տան տնամերձ հողամասում գտնվող կեռասի ծառին առկա հյուսված պարանով կախվելու եղանակով Մեսրոպ Խումարյանը կատարել է ինքնասպանություն:

Դեպքի առթիվ 2018թ. սեպտեմբերի 27-ին Արագածոտնի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 29106318 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Քրեական գործով պարզվել է, որ Մեսրոպ Խումարյանը ծնվել է 2006 թվականի մայիսի 08-ին՝ Արագածոտնի մարզի Օշական գյուղում: Սովորել է նույն գյուղի Մ.Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում: 2017 թվականին ընդունվել է Աշտարակ քաղաքի Գ.Ոսկանյանի անվան գեղարվեստի դպրոցի գեղանկարչության բաժին: Ֆիզիկապես և հոգեպես եղել է առողջ, կյանքից չի գանգատվել, տարօրինակ վարքագծով աչքի չի ընկել, խնդիրներ չի ունեցել:

Գործով հարցաքննվել են Մեսրոպ Խումարյանի ծնողներ՝ Պետրոս Սանասարի Խումարյանը, Հեղինե Հովհաննեսի Սարգսյանը, Մ.Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչներ՝ Գոհար Բրյանը, Նինա Ապրեսյանը, դասընկերներ՝ Ալբերտ Ներսիսյանը, Միհրան Միրիջանյանը, հարևաններ՝ Գևորգ Կոշեցյանը, Ժիրայր Բաղդասարյանը, համայնքի ղեկավար Արամ Ներսիսյանը, ովքեր իրեն ցուցմունքներով բնութագրել են Մեսրոպ Խումարյանի անձը:

Նախաքննությամբ պարզվել է, որ Մեսրոպ Խումարյանը հոգեբուժական և նարկոլոգիական կաբինետներում հաշվառված չի եղել:

Առգրավվել է Մ.Խումարյանի մանկան զարգացման քարտը:

26.02.2019թ-ին որոշում է կայացվել ,,Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի,, ,,Բժշկական Հոգեբանության ամբիոնի,, վարիչ Խ.Գասպարյանին նշանակել որպես փորձագետ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել պարզել տուժող Մեսրոպ Խումարյանի ընդհանուր հոգեկան վիճակը, ինչպիսի հոգեբանական վիճակում է նա գտնվել նախքան ինքնասպանություն կատարելը և այն կատարելու պահին,

ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հանգամանքներ, որոնց պարզաբանման համար անհրաժեշտ են դատահոգեբանական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244-րդ և 248-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 29106318 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ,,Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի,, ,,Բժշկական Հոգեբանության ամբիոնին,,՝ ի դեմս ամբիոնի վարիչ Խ.Գասպարյանին:

2.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Ինչպիսի անհատական հոգեբանական, անձնային և հուզական առանձնահատկություններ է ունեցել Մեսրոպ Խումարյանը:

բ/ Ինչ հոգեկան վիճակում է գտնվել Մեսրոպ Խումարյանն ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում:

գ/ Հաշվի առնելով Մեսրոպ Խումարյանի հոգեկան զարգացման մակարդակը, կարող էր արդյոք նա լիովին ընկալել իրավիճակը և իրավիճակի նշանակությունը:

3. Փորձագետին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները: Միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ, 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության, ինչպես նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում ՀՀ քր. օր-ի 315-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

4. Փորձաքննության կատարման համար փորձագետներին տրամադրել սույն որոշման օրինակը՝ 2 թերթից, մանկան զարգացման քարտը՝ մեկ փաթեթում, և քրեական գործը՝ ,,237,, թերթից:

**Ավագ քննիչ՝ Դ.Ոսկանյան**